Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատ

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտե

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտե

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատ

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի, Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կողմից համատեղ ստուգում՝ 2017 թվականին Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմինների կողմից «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության պահպանման նկատմամբ»

(հաստատված է Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի,

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի,

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի եւ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կոլեգիաների (խորհուրդների, լիազորված անձանց) համատեղ նիստի որոշմամբ,

2018 թվականի նոյեմբերի 29-ի թիվ [62Կ(1283)] արձանագրություն)

1. **Համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու հիմքերը**.

բոլոր կողմերի համար՝ «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի ու վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության (2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի թիվ 5 հավելված) 53-րդ կետը.

բոլոր կողմերի համար՝ «2018 թվականին Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի, Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի, Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի եւ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի կողմից համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու մասին» համաձայնագիրը.

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի համար՝ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2018 թվականի տարեկան ծրագիրը.

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի համար՝ Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի աշխատանքի պլանը՝ 2018 թվականի առաջին կիսամյակի համար.

Ղազախստանի Հանրապետության հաշվիչ պալատի համար՝ Պետական աուդիտի 2018 թվականի օբյեկտների ցանկը.

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի համար՝ 2018 թվականի աուդիտորական գործունեության պլանը.

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի համար՝ Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2018 թվականի աշխատանքի պլանը:

2. **Համատեղ վերահսկիչ միջոցառման առարկան**. լիազորված մարմինների գործունեությունը՝ ուղղված ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգը Եվրասիական տնտեսական միությունում (այսուհետ՝ ԵԱՏՄ, Միություն) կիրառելուն:

3. **Համատեղ վերահսկիչ միջոցառման օբյեկտները**.

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն (քաղ. Երեւան),

Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարություն (քաղ. Մինսկ),

Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետարանի կոմիտե (քաղ. Աստանա),

Ղրղզստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան (քաղ. Բիշքեկ),

Դաշնային գանձապետարանի միջտարածաշրջանային գործառնական վարչություն (քաղ. Մոսկվա),

լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար նախատեսված օբյեկտները.

Եվրասիական տնտեսական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե, Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտե, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտե, Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայություն, Դաշնային մաքսային ծառայություն:

4. **Համատեղ վերահսկիչ միջոցառում անցկացնելու ժամկետը**. 2018 թվականի մայիս-նոյեմբեր ամիսներ

5. **Համատեղ վերահսկիչ միջոցառման նպատակները**.

5.1. Ստուգել անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարներն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից մյուս անդամ պետությունների հաշիվներին փոխանցելու ամբողջականությունն ու ժամանակին կատարելը.

5.2. Ստուգել յուրաքանչյուր անդամ պետության համար սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները բաշխելու նորմատիվների պահպանումը լիազորված մարմինների կողմից.

5.3. Վերլուծել ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի՝ Միությունում գործարկելու արդյունքները:

6. **Գործունեության ստուգվող ժամանակահատվածը**. 2017 թվական:

7. **Համատեղ վերահսկիչ միջոցառման արդյունքները**.

7.1. **Անդամ պետությունների կողմից «Ներմուծման մաքսատուրքերի (համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ վճարների) գումարները հաշվեգրելու եւ բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի թիվ 5 հավելված) (այսուհետ՝ Արձանագրություն) այն դրույթի պահպանումը, որը վերաբերում է մաքսատուրքերն ազգային արժույթով այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին հաշվեգրելուն, որտեղ դրանք ենթակա են վճարման (Արձանագրության 3-րդ կետ): Ներմուծման մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի կիրառումը ներմուծման**

մաքսատուրքերի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի (տոկոսների) գումարների մասով (Արձանագրության 1-ին կետ):

Արձանագրության 3-րդ կետին համապատասխան՝ 2017 թվականին ԵԱՏՄ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի, ինչպես նաեւ ներմուծման մաքսատուրքերի գումարի նկատմամբ հաշվարկված տույժերի գումարների հաշվեգրումն իրականացվել է ազգային արժույթով այն անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին, որտեղ դրանք ենթակա են եղել վճարման՝ մաքսային իրավահարաբերությունները կարգավորող եւ Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին ու ակտերին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 43 766 490,3 հազ. դրամ, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 533 951,2 հազ. դրամ,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 1 995 752,0 հազ. դրամ,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 3 087 725,9 հազ. դրամ,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 831 563,3 հազ. դրամ,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 37 317 497,9 հազ. դրամ:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 67 420 631,9 հազ. դրամ, այդ թվում՝

Բելառուսի Հանրապետությունից՝ 3 704 460,8 հազ. դրամ,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 3 378 174,0 հազ. դրամ,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 1 056 053,2 հազ. դրամ,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 59 281 943,9 հազ. դրամ:

Բելառուսի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 1 217 345,9 հազ. բել. ռուբլի, որոնք բաշխվել են հետեյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 14 851,6 հազ. բել. ռուբլի,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 55 511,0 հազ. բել. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 85 883,7 հազ. բել. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 23 129,6 հազ. բել. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 1 037 970,0 հազ. բել. ռուբլի:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 969 810,5 հազ. բել. ռուբլի, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 8 006,2 հազ. բել. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 55 622,9 հազ. բել. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 15 853,2 հազ. բել. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 890 328,2 հազ. բել. ռուբլի:

Ղազախստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 206 078 282,5 հազ. տենգե, որոնք բաշխվել են հետեյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 2 287 468,9 հազ. տենգե,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 9 397 169,7 հազ. տենգե,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 14 652 165,9 հազ. տենգե,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 3 915 487,4 հազ. տենգե,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 175 825 990,6 հազ. տենգե:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 253 200 658,6 հազ. տենգե, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետության կողմից բաշխված՝ 2 093 205,9 հազ. տենգե,

Բելառուսի Հանրապետության կողմից բաշխված՝ 14 483 111,2 հազ. տենգե,

Ղրղզստանի Հանրապետության կողմից բաշխված՝ 4 139 494,9 հազ. տենգե,

Ռուսաստանի Դաշնության կողմից բաշխված՝ 232 484 846,6 հազ. տենգե:

Ղրղզստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 12 390 164,4 հազ. սոմ, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 151 160,0 հազ. սոմ,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 564 991,5 հազ. սոմ,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 874 126,1 հազ. սոմ,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 235 413,1 հազ. սոմ,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 10 564 473,7 հազ. սոմ:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 14 980 910,8 հազ. սոմ, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 118 613,4 հազ. սոմ,

Բելառուսի Հանրապետությունից՝ 823 532,6 հազ. սոմ,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 824 814,2 հազ. սոմ,

Ռուսաստանի Դաշնությունից՝ 13 213 950,6 հազ. սոմ:

Ռուսաստանի Դաշնությունում ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 588 461 197,6 հազ. ռուս. ռուբլի, որոնք բաշխվել են հետեւյալ կերպ.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 7 179 226,6 հազ. ռուս. ռուբլի,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 26 833 830,6 հազ. ռուս. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 41 515 937,5 հազ. ռուս. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 11 180 762,8 հազ. ռուս. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 501 751 440,1 հազ. ռուս. ռուբլի:

Անդամ պետություններից ներմուծման մաքսատուրքերի մուտքերը 2017 թվականին կազմել են 76 103 679,2 հազ. ռուս. ռուբլի, այդ թվում՝

Հայաստանի Հանրապետությունից՝ 4 513 435,9 հազ. ռուս. ռուբլի,

Բելառուսի Հանրապետությունից՝ 31 278 746,3 հազ. ռուս. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետությունից՝ 31 385 289,0 հազ. ռուս. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետությունից՝ 8 926 208,0 հազ. ռուս. ռուբլի:

7.2. **Լիազորված մարմնի միասնական հաշվին մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի մասով վճարումների հաշվանցում կատարելու կարգի կազմակերպումն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից** (**Արձանագրության 3-րդ կետ**):

Արձանագրության 3-րդ կետին համապատասխան՝ ներմուծման մաքսատուրքերի վճարման դիմաց կարող են հաշվանցվել հարկեր եւ վճարներ, ինչպես նաեւ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան վճարման ենթակա այլ վճարումներ (բացառությամբ հատուկ, հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերի), որոնք մուտքագրվել են լիազորված մարմնի միասնական հաշվին: Ընդ որում, ներմուծման մաքսատուրքերը չեն կարող հաշվանցվել այլ վճարումների դիմաց՝ բացառությամբ այնպիսի հաշվանցման, որը կատարվում է մաքսային վճարների, հատուկ, հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերի, ինչպես նաեւ տույժերի (տոկոսների) վճարման մասով վճարողների պարտքի մարման դիմաց:

Հայաստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի համար վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2017 թվականին կազմել է 2 329,2 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 29-ի թիվ ՎՊԵ-74 հարցմամբ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի մասով գումարների հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Բելառուսի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի համար վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2017 թվականին կազմել է 11 589,4 հազ. բել. ռուբլի:

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 03/04-2353 հարցմամբ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղազախստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի համար վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2017 թվականին կազմել է 278 298,6 հազ. տենգե:

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի 2018 թվականի մայիսի 30-ի թիվ 9-5-2-37/2065-И հարցմամբ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղրղզստանի Հանրապետությունում ներմուծման մաքսատուրքերի համար վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2017 թվականին կազմել է 19 738,5 հազ. սոմ:

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2018 թվականի մայիսի 21-ի թիվ 02/800 հարցմամբ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ռուսաստանի Դաշնությունում ներմուծման մաքսատուրքերի համար վճարների հաշվանցումների ընդհանուր գումարը 2017 թվականին կազմել է 89 752,70 հազ. ռուս. ռուբլի:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ЗИ 03-133/03-01 հարցմամբ Դաշնային մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի հաշվանցումներ կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

7.3. **Յուրաքանչյուր անդամ պետության լիազորված մարմնի կողմից մուտքերի առանձին հաշվառման կազմակերպումը. այդ մուտքերի առանձին արտացոլումը յուրաքանչյուր անդամ պետության բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ** (**Արձանագրության** 5-**րդ կետ**):

Արձանագրության 5-րդ կետով սահմանված՝ լիազորված մարմնի միասնական հաշվին ներմուծման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձերի, պարտքի մարման դիմաց հաշվանցումների) գումարների, այլ անդամ պետությունների արտարժութային հաշիվներին փոխանցված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարների, տվյալ անդամ պետության կողմից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումից ստացված եկամուտների՝

տվյալ անդամ պետության բյուջե հաշվեգրված գումարների, այլ անդամ պետություններից անդամ պետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարների առանձին հաշվառման եւ յուրաքանչյուր անդամ պետության բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ արտացոլման կազմակերպման մասով Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմիններում 2017 թվականին խախտումներ չեն արձանագրվել:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ նշված են 68 585 910,6 հազ. դրամի չափով անդամ պետությունների կողմից ներմուծման մաքսատուրքերից մուտքեր, որոնց գումարի մեջ մտնում են 631 327,6 հազ. դրամի չափով հատուկ հակագնագցման եւ փոխհատուցման տուրքերի մուտքերը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ Արձանագրության 5-րդ կետի խախտմամբ առանձին արտացոլված չեն 67 954 583,0 հազ. դրամի չափով ներմուծման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձերի, պարտքի մարման դիմաց հաշվանցումների) գումարները:

Ղրղզստանի Հանրապետությունում 2017 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ Արձանագրության 5-րդ կետի խախտմամբ առանձին արտացոլված չեն ներմուծման մաքսատուրքերի մուտքերի (վերադարձերի, պարտքի մարման դիմաց հաշվանցումների) գումարները, ինչպես նաեւ այլ անդամ պետությունների հաշիվներին արտարժույթով փոխանցված՝ բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները:

7.4. **Անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարների արտացոլումը բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ**: **Օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում բաշխված ներմուծման**

մաքսատուրքերի գումարների փոխանցման ժամկետների պահպանումը: **Այդ գումարների**, **ինչպես նաեւ օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից անդամ պետության բյուջե մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտների արտացոլումը բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ** (**Արձանագրության** 6-**րդ կետ**)**:**

Արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվին օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն արտացոլվում են տվյալ անդամ պետության՝ հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Անդամ պետության օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարները փոխանցվում են տվյալ անդամ պետության բյուջե եւ մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին ոչ ուշ, քան անդամ պետության ընթացիկ տարվա երկրորդ աշխատանքային օրվանից ոչ ուշ, ինչպես նաեւ արտացոլվում են հաշվետու տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Մյուս անդամ պետությունների օրացուցային տարվա վերջին աշխատանքային օրվա ընթացքում մյուս անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տվյալ անդամ պետության բյուջե մուտքագրված՝ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտներն արտացոլվում են ընթացիկ տարվա բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում (2017 թվականի դեկտեմբերի 29) բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 204 794,1 հազ. դրամ, որը 2017 թվականի հունվարի 8-ին բաշխվել է եւ 2018 թվականի հունվարի 8-ին (2018 թվականի առաջին աշխատանքային օրը) փոխանցվել է.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 2 498,5 հազ. դրամ,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 9 338,6 հազ. դրամ,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 14 448,2 հազ. դրամ,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 3 891,1 հազ. դրամ,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 174 617,7 հազ. դրամ:

2017 թվականի վերջին աշխատանքային օրվա (2017 թվականի դեկտեմբերի 29) ընթացքում բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարներն արտացոլված են 2017 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

2017 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են Հայաստանի Հանրապետության բյուջե որպես եկամուտ՝ Բելառուսի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 48,0 հազ. բել. ռուբլու չափով, Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 7 815,4 հազ. տենգեի չափով, Ղրղզստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 629,5 հազ. սոմի չափով, Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններից՝ 2,9 հազ. ռուս. ռուբլու չափով, ենթակա են արտացոլման 2018 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Բելառուսի Հանրապետությունում 2017 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում (2017 թվականի դեկտեմբերի 29) բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 3 937,1 հազ. բել. ռուբլի, որը 2018 թվականի հունվարի 3-ին (2018 թվականի առաջին աշխատանքային օրը) բաշխվել եւ փոխանցվել է.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 48,0 հազ. բել. ռուբլի,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 179,5 հազ. բել. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 277,8 հազ. բել. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 74,8 հազ. բել. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 3 357,0 հազ. բել. ռուբլի:

2017 թվականի վերջին աշխատանքային օրվա (2017 թվականի դեկտեմբերի 29) նշված ներմուծման մաքսատուրքերն արտացոլված են 2017 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

2017 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են Բելառուսի Հանրապետության հանրապետական բյուջե որպես եկամուտ՝ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 9 338,6 հազ. դրամի չափով, Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 32 106,3 հազ. տենգեի չափով, Ղրղզստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 2 042,8 հազ. սոմի չափով, Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններից՝ 40 769,6 հազ. ռուս. ռուբլու չափով, ենթակա են արտացոլման 2018 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Ղազախստանի Հանրապետությունում 2017 թվականի վերջին աշխատանքային օրվա (2017 թվականի դեկտեմբերի 29) ընթացքում բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 704,086.2 հազ. տենգե, որը 2017 թվականի դեկտեմբերի 29-ին բաշխվել է անդամ պետությունների բյուջեներ: Ներմուծման մաքսատուրքերի բաշխված գումարը փոխանցվել է.

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 50 060,5 հազ. տենգե (2017 թվականի դեկտեմբերի 29),

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 7 815,4 հազ. տենգե (2018 թվականի հունվարի 3),

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 32 106,3 հազ. տենգե (2018 թվականի հունվարի 3),

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 13 377,6 հազ. տենգե (2018 թվականի հունվարի 3),

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 600 726,4 հազ. տենգե (2018 թվականի հունվարի 3):

2017 թվականի վերջին աշխատանքային օրվա (2017 թվականի դեկտեմբերի 29) նշված ներմուծման մաքսատուրքերն արտացոլված են 2017 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

2017 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են հանրապետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 14 448,2 հազ. դրամի չափով, Բելառուսի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 277,8 հազ. բել. ռուբլու չափով, Ղրղզստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 6 800,7 հազ. սոմի չափով, Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններից՝ 63 093,4 հազ. ռուս. ռուբլու չափով, ենթակա են արտացոլման 2018 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Ղրղզստանի Հանրապետությունում 2017 թվականի վերջին աշխատանքային օրվա (2017 թվականի դեկտեմբերի 30) ընթացքում բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 51 597,0 հազ. սոմ:

Նշված ներմուծման մաքսատուրքերը 2018 թվականի հունվարի 2-ին (2018 թվականի առաջին աշխատանքային օրը) բաշխվել են անդամ պետությունների բյուջեներ: Ներմուծման մաքսատուրքերի բաշխված գումարները փոխանցվել են.

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 980,3 հազ. սոմ,

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 629,5 հազ. սոմ,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 2 352,8 հազ. սոմ,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 3 640,2 հազ. սոմ,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 43 994,2 հազ. սոմ:

2017 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են հանրապետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 3 891,1 հազ. դրամի չափով, Բելառուսի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 74,8 հազ. բել. ռուբլու չափով, Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմիններից՝ 16 987,3 հազ. ռուս. ռուբլու չափով, Ղազախստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 13 377,6 հազ. տենգեի չափով, ենթակա են արտացոլման 2018 թվականի հանրապետական բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

Ռուսաստանի Դաշնությունում 2017 թվականի վերջին աշխատանքային օրվա (2017 թվականի դեկտեմբերի 30) ընթացքում ԴԳ-ի միջտարածաշրջանային գործառնական վարչության առանձին հաշվին մուտքագրված եւ բաշխման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարը կազմել է 238,5 հազ. ռուս. ռուբլի: Ներմուծման մաքսատուրքերի նշված գումարը 2018 թվականի հունվարի 10-ին (ռուսաստանյան կողմի երկրորդ աշխատանքային օրը) բաշխվել եւ փոխանցվել է.

Հայաստանի Հանրապետության բյուջե՝ 2,9 հազ. ռուս. ռուբլի,

Բելառուսի Հանրապետության բյուջե՝ 10,9 հազ. ռուս. ռուբլի,

Ղազախստանի Հանրապետության բյուջե՝ 16,8 հազ. ռուս. ռուբլի,

Ղրղզստանի Հանրապետության բյուջե՝ 4,6 հազ. ռուս. ռուբլի,

Ռուսաստանի Դաշնության բյուջե՝ 203,3 հազ. ռուս. ռուբլի:

Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից փոխանցված՝ 2017 թվականի վերջին աշխատանքային օրվա ընթացքում (դեկտեմբերի 29) ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտները, որոնք մուտքագրվել են դաշնային բյուջե՝ Հայաստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 174 617,6 հազ. դրամի չափով, Բելառուսի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 3 356,9 հազ. բել. ռուբլու չափով, Ղազախստանի

Հանրապետության լիազոր մարմիններից՝ 600 726,4 հազ. տենգեի չափով, Ղրղզստանի Հանրապետության լիազոր մարմիններից՝ 43 994,2 հազ. սոմի չափով, ենթակա են արտացոլման Ռուսաստանի Դաշնության 2018 թվականի դաշնային բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ:

7.5. **Անդամ պետությունների բյուջեների միջեւ բաշխման ոչ ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվառման կազմակերպումը եւ հաշվեգրման հիմնավորվածությունը**:

Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 26-րդ հոդվածին համապատասխան եւ դրանով սահմանվում է ներմուծման այն մաքսատուրքերի գումարների հաշվեգրման եւ անդամ պետությունների միջեւ բաշխման կարգը, որոց վճարման պարտավորությունը, Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների հետ կապված, առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը հանրապետական բյուջե կազմել է 3 978 869,3 հազ. դրամ:

2016 թվականի հետ համեմատած՝ 2017 թվականին նշված մուտքերն աճել են 1,6 անգամ (2016 թվականին՝ 2 449 092,40 հազ. դրամ):

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 29-ի թիվ ՎՊԵ-74 հարցմամբ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի՝ անդամ պետությունների բյուջեների միջեւ չբաշխման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Բելառուսի Հանրապետությունում 2017 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը հանրապետական բյուջե կազմել է 75,7 հազ. բել. ռուբլի:

2016 թվականի հետ համեմատած՝ 2017 թվականին նշված մուտքերը նվազել են 1,8 անգամ (2016 թվականին՝ 135,8 հազ. բել. ռուբլի):

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 03/04-2353 հարցմամբ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի՝ անդամ պետությունների բյուջեների միջեւ չբաշխման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղազախստանի Հանրապետությունում 2017 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը հանրապետական բյուջե կազմել է 1 455 592,0 հազ. տենգե:

2016 թվականի հետ համեմատած՝ 2017 թվականին նշված մուտքերը նվազել են 2,9 անգամ (2016 թվականին՝ 4 241 139,9 հազ. տենգե):

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի 2018 թվականի մայիսի 30-ի թիվ 9-5-2-37/2065-И հարցմամբ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված՝ Միության մաքսային սահմանով տեղափոխված ապրանքների մաքսային ձեւակերպումների վերաբերյալ փաստաթղթերի ստուգման ընթացքում արձանագրվել է հետեւյալը:

Հայտնաբերվել են 2017 թվականին հետեւյալ կազմակերպությունների կողմից 2010 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ներմուծված ապրանքների մասով 124 928,3 հազ. տենգե գումարի ներմուծման մաքսատուրքերը բյուջետային դասակարգման չբաշխվող ծածկագրով հաշվեգրելու երեք դեպք. «ԿԱՐԱԶԱԳԱՆԱԿ ՊԵՏՐՈԼԻՈՒՄ ՌՊԵՐԵՅԹԻՆԳ Բ.Վ.» ՓԲԸ, «ՊԵՏՐՈԿԱԶԱԽՍՏԱՆ ԿՈՒՄԿՈԼ ՌԵՍՈՐՍԻԶ» ԲԸ:

Տուրքերի նշված գումարը չի բաշխվել եւ չի փոխանցվել ԵԱՏՄ անդամ պետությունների բյուջեներ, ինչը համարվում է Արձանագրությամբ սահմանված՝

անդամ պետությունների միջեւ ներմուծման այն մաքսատուրքերի գումարները հաշվեգրելու եւ բաշխելու կարգի խախտում, որոնք վճարելու պարտավորությունը, Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների հետ կապված, առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից:

2017 թվականին 106112 բյուջետային դասակարգման ծածկագրով (այսուհետ՝ ԲԴԾ) մուտքագրված՝ բաշխման եւ փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակում.

Համարը՝ ը/կ	Ամսաթիվը	Փաստաթղթի համարը	Վճարողի անվանումը, (ՀՎՀՀ)	Գումարը (տենգե)	Հայտարարագրի համարը, ապրանքի անվանումը
1.	25.08.2017	000558011	«ԿԱՐԱՉԱԳԱՆԱԿ ՊԵՏՐՈԼԻՈՒՄ ՌՊԵՐԵՅԹԻՆԳ Բ.Վ.» ՓԲԸ (KARACHAGANAK PETROLEUM) (981141001567)	36 845 211,0	№ 51702/250817/0000766 (գազային սարքավորումներ)
2.	06.06.2017	000557426	«ԿԱՐԱՉԱԳԱՆԱԿ ՊԵՏՐՈԼԻՈՒՄ ՌՊԵՐԵՅԹԻՆԳ Բ.Վ.» ՓԲԸ (KARACHAGANAK PETROLEUM) (981141001567)	54 983 106,0	№ 51702/060617/0000528 (գազային սարքավորումներ)
3.	25.12.2017	91300	«ՊԵՏՐՈԿԱԶ ԿՈՒՄԿՈԼ ՌԵՍՈՐՍԻԶ» ԲԸ (940540000210)	33 100 000,0	№ 55603/030118/0000003 (գազային սարքավորումներ)

Ղրղզստանի Հանրապետությունում 2017 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը հանրապետական բյուջե կազմել է 6 456,8 հազ. սոմ:

2016 թվականի հետ համեմատած՝ 2017 թվականին նշված մուտքերը նվազել են 12,6 անգամ (2016 թվականին՝ 81 645,64 հազ. սոմ):

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2018 թվականի մայիսի 21-ի թիվ 02/800 հարցմամբ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ անդամ պետությունների բյուջեների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների

չբաշխման համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում արձանագրվել է հետեւյալը:

LLC Central Asia Petroleum/«Միջինասիական պետրոլեում» ՍՊԸ ընկերության կողմից ապրանքների ներմուծման համար վճարվել են չբաշխվող 11 511 100 ԲԴԾ-ով 2 684,9 հազ. սոմ գումարի չափով ներմուծման մաքսատուրքեր, որոնց վճարման պարտավորությունն առաջացել է 2010 թվականի սեպտեմբերի 1-ից՝ նախքան ԵԱՏՄ-ին Ղրղզստանի Հանրապետության միանալը:

«Մաշինս» ԻՊՍ ՍՊԸ ներմուծողի կողմից 343,8 հազ. սոմ գումարով ներմուծման մաքսատուրքերը սխալմամբ վճարվել են չբաշխվող 11 511 100 ԲԴԾ-ով, ընդ որում, նշված ներմուծման մաքսատուրքերը վճարելու պարտավորությունն առաջացել է 2017 թվականի դեկտեմբերին, այսինքն՝ ԵԱՏՄ-ին Ղրղզստանի Հանրապետության միանալուց հետո:

Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության կողմից ներկայացված տեղեկությունների համաձայն՝ ներմուծման մաքսատուրքերի տվյալ գումարը 2018 թվականի հուլիսի 20-ին բաշխվել է անդամ պետությունների բյուջեներ Ղրղզստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան եւ հաշվի առնելով Արձանագրության դրույթները:

Ռուսաստանի Դաշնությունում 2017 թվականին չբաշխվող ներմուծման մաքսատուրքերի մուտքերի գումարը դաշնային բյուջե կազմել է «մինուս» 12 190,6 հազ. ռուս. ռուբլի:

2016 թվականին նշված մուտքերը կազմել են «մինուս» 33 581,3 հազ. ռուս. ռուբլի:

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ЗИ 03-133/03-01 հարցմամբ Դաշնային մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ անդամ պետությունների բյուջեների միջեւ ներմուծման

մաքսատուրքերը չբաշխելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

7.6. **Ավել վճարված** (**ավել գանձված**) **ներմուծման մաքսատուրքերի գումարների՝ վճարողին վերադարձի կազմակերպում** (**Արձանագրության** 7-9-**րդ կետեր**):

Ավել վճարված (ավել գանձված) ներմուծման մաքսատուրքերի վերադարձն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից իրականացվում է Արձանագրության դրույթներին համապատասխան՝ ազգային նորմատիվ փաստաթղթերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետությունում թիվ 900008000268 հատուկ հաշվից ներմուծման մաքսատուրքի վերադարձերի ընդհանուր գումարը 2017 թվականի համար կազմել է 24 010,4 հազ. դրամ (2016 թվականի համեմատ վերադարձերի գումարն ավելացել է 9 262,2 հազ. դրամով կամ 62,8 %-ով):

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2018 թվականի հունիսի 29-ի թիվ ՎՊԵ-74 հարցմամբ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ վերադարձեր կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Բելառուսի Հանրապետությունում բյուջեի եկամուտների դասակարգման 1 5 3 26 01 ծածկագրից («Ներմուծման մաքսատուրքեր, որոնք վճարվել են Բելառուսի Հանրապետության տարածքում «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին համապատասխան») ներմուծման մաքսատուրքերի վերադարձերի ընդհանուր գումարը 2017 թվականի համար կազմել է 7 434,4 հազ. բել. ռուբլի (2016 թվականի համեմատ վերադարձերի գումարն ավելացել է 985,2 հազ. բել. ռուբլով կամ 15,3 %-ով):

Բելառուսի Հանրապետության պետական վերահսկողության կոմիտեի 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 03/04-2353 հարցմամբ Բելառուսի

Հանրապետության պետական մաքսային կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձերի համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղազախստանի Հանրապետությունում 106101 ԲԴԾ-ից («Ներմուծման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ վճարներ), որոնք վճարվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին համապատասխան») ներմուծման մաքսատուրքերի վերադարձերի գումարը 2017 թվականին կազմել է 2 707 285,5 հազ. տենգե (2016 թվականի համեմատ՝ վերադարձերի գումարն ավելացել է 1 211 836,1 հազ. տենգեով կամ 81,0 %-ով):

Ղազախստանի Հանրապետության հանրապետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության հարցերով հաշվիչ կոմիտեի 2018 թվականի մայիսի 30-ի թիվ 9-5-2-37/2065-И հարցմամբ Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եւ ներմուծման մաքսատուրքերի վերադարձեր կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ղրղզստանի Հանրապետությունում բյուջեի եկամուտների դասակարգման 11 511 400 ծածկագրից («Ներմուծման մաքսատուրքեր, որոնք վճարվել են ՄՄՄ դրույքաչափերով եւ հաշվեգրվել են «Եվրասիական տնտեսական միությանը միանալու մասին» պայմանագրին համապատասխան») ներմուծման մաքսատուրքերի վերադարձերի ընդհանուր գումարը 2017 թվականին կազմել է 3 697,3 հազ. սոմ (2016 թվականի համեմատ՝ վերադարձերի գումարը նվազել է 9 133,0 հազ. սոմով կամ 71,2 %-ով):

Ղրղզստանի Հանրապետության հաշվիչ պալատի 2018 թվականի մայիսի 21-ի թիվ 02/800 հարցմամբ Ղրղզստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ

ներմուծման մաքսատուրքերի գումարների վերադարձեր կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքում խախտումներ չեն արձանագրվել:

Ռուսաստանի Դաշնությունում 153 110 110 1001 0000 180 ԲԴԾ-ից («Ներմուծման մաքսատուրքեր (համարժեք այլ տուրքեր, հարկեր եւ վճարներ)», որոնք վճարվել են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 5 հավելվածին համապատասխան) ներմուծման մաքսատուրքերի վերադարձերի ընդհանուր գումարը 2017 թվականին կազմել է 7 301 408,5 հազ. ռուս. ռուբլի (2016 թվականի համեմատ՝ վերադարձերի գումարը նվազել է 244 101,9 հազ. ռուս. ռուբլով կամ 3,2 %-ով):

Ռուսաստանի Դաշնության հաշվիչ պալատի 2018 թվականի հունիսի 19-ի թիվ ЗИ 03-133/03-01 հարցմամբ Դաշնային մաքսային ծառայության կողմից ներկայացված եւ վերադարձեր կատարելու համար հիմք ծառայած փաստաթղթերի պատճենների ստուգման արդյունքներով խախտումներ չեն արձանագրվել:

7.7. **Բաշխման եւ անդամ պետության լիազորված մարմնի միասնական հաշվից տվյալ անդամ պետության բյուջե, ինչպես նաեւ մյուս անդամ պետությունների արտարժութային հաշիվներին փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվարկի կազմակերպումը: Արձանագրությամբ սահմանված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվների պահպանումը** (**Արձանագրության** 10-12-**րդ կետեր**):

Անդամ պետությունների բյուջեներ փոխանցման ենթակա ներմուծման մաքսատուրքերի գումարների հաշվարկը եւ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից դրանց բաշխումը, սահմանված նորմատիվների համաձայն, իրականացվում են ավտոմատացված տեղեկատվական համակարգերի միջոցով:

«Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին»

պայմանագրով ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները սահմանվել են հետեւյալ չափով.

Հայաստանի Հանրապետության համար՝ 1,11 տոկոս,

Բելառուսի Հանրապետության համար՝ 4,56 տոկոս,

Ղազախստանի Հանրապետության համար՝ 7,11 տոկոս,

Ղրղզստանի Հանրապետություն համար՝ 1,9 տոկոս,

Ռուսաստանի Դաշնության համար՝ 85,32 տոկոս:

Հաշվի առնելով 2017 թվականի դեկտեմբերի 23-ին կնքված, 2017 թվականի ապրիլի 11-ին Մոսկվայում կատարված՝ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի առանձին դրույթների կիրառման մասին արձանագրության (այսուհետ՝ 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրություն) ժամանակավոր կիրառումը, 2017 թվականին սահմանվել են հետեյալ նորմատիվները.

Հայաստանի Հանրապետության համար՝ 1,220 տոկոս,

Բելառուսի Հանրապետության համար՝ 4,560 տոկոս,

Ղազախստանի Հանրապետության համար՝ 7,055 տոկոս,

Ղրղզստանի Հանրապետություն համար՝ 1,900 տոկոս,

Ռուսաստանի Դաշնության համար՝ 85,265 տոկոս:

2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրության 2-րդ հոդվածի համաձայն՝ տվյալ Արձանագրությունը ժամանակավոր կիրառվում էր 2017 թվականի հունվարի 1-ից եւ ուժի մեջ էր մտնում այն ամսվան հաջորդող ամսվա 1-ից, որում ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստացվել է վերջին գրավոր ծանուցումը՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից՝ սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու համար:

2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրության կատարման նպատակով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ ԵՏՀ) կողմից լիազորված մարմիններին առաջարկվել էր կատարել այն ներմուծման մաքսատուրքերի գումարների «վերահաշվարկ», որոնք մուտքագրվել են միասնական հաշվին 2017 թվականի հունվարի 1-ից մինչեւ առաջին հաշվետու օրն ընկած ժամանակահատվածում եւ բաշխվել են նախկինում գործող նորմատիվներով: Տվյալ գումարը հաշվարկվում էր որպես տվյալ ժամանակահատվածի համար փաստացի բաշխված ներմուծման մաքսատուրքերի գումարի եւ տվյալ ժամանակահատվածի համար նոր նորմատիվներով բաշխման ենթակա գումարի միջեւ տարբերությունը՝ ըստ յուրաքանչյուր անդամ պետության: ԵՏՀ-ն առաջարկել էր անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրությունը պաշտոնապես ստանալու ամսաթվից հետո առաջին աշխատանքային օր համարել բաշխման նոր նորմատիվներով անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման համար սահմանված առաջին հաշվետու օրը:

Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրությունը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում մուտք լինելու ամսաթիվը 2017 թվականի մայիսի 2-ն է, 2017 թվականի համար սահմանված նորմատիվներով անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների «վերահաշվարկն» ու բաշխումը կատարվել են 2017 թվականի մայիսի 2-ին:

Բելառուսի Հանրապետությունում 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրությունը՝ Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարությունում մուտք լինելու ամսաթիվը 2017 թվականի մայիսի 5-ն է, 2017 թվականի համար սահմանված բաշխման նորմատիվներով անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների «վերահաշվարկն» ու բաշխումը կատարվել են 2017 թվականի մայիսի 6-ին:

Ղազախստանի Հանրապետությունում 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրությունը՝ Գանձապետարանի կոմիտեում մուտք լինելու ամսաթիվը

2017 թվականի հունիսի 2-ն է, Գանձապետարանի կոմիտեի կողմից 2017 թվականին նոր նորմատիվներով ներմուծման մաքսատուրքերի «վերահաշվարկ» եւ բաշխում չի կատարվել: Գանձապետարանի կոմիտեի կողմից 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրությամբ սահմանված ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվները 2017 թվականին չեն կիրառվել:

Ղազախստանի Հանրապետությունը 2017 թվականի հունվարի 1-ից ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նոր նորմատիվներ սահմանող 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրության կիրառումը սկսել է նշված արձանագրությունն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ վավերացման ներպետական ընթացակարգերը կատարելու ամսաթվից հետո: Ղազախստանի Հանրապետությունում նշված Արձանագրությունը վավերացվել է Ղազախստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 14-ի թիվ 143-IV ՅՐԿ օրենքով: Ղազախստանի Հանրապետության լիազորված մարմնի կողմից կատարվել է 2017 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2018 թվականի ապրիլի 28-ն ընկած ժամանակահատվածի համար ներմուծման մաքսատուրքերի գումարների վերահաշվարկ, որոնք ամբողջ ծավալով փոխանցվել են անդամ պետությունների բյուջեներ 2018 թվականի մայիսի 3-ին,4-ին:

Ղրղզստանի Հանրապետությունում 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրությունը՝ Կենտրոնական գանձապետարանում մուտք լինելու ամսաթիվը 2017 թվականի հուլիսի 7-ն է, 2017 թվականի համար սահմանված բաշխման նորմատիվներով անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների «վերահաշվարկն» ու բաշխումը կատարվել են 2017 թվականի հուլիսի 11-ին:

Ռուսաստանի Դաշնությունում 2017 թվականի ապրիլի 11-ի Արձանագրությունը՝ Դաշնային գանձապետարանում մուտք լինելու ամսաթիվը 2017 թվականի հունիսի 20-ն է, 2017 թվականի համար սահմանված բաշխման նորմատիվներով անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների «վերահաշվարկն» ու բաշխումը կատարվել են 2017 թվականի հունիսի 21-ին:

7.8. **Անդամ պետությունների միջեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման (Արձանագրության** 10-**րդ կետ) եւ անդամ պետություններ դրանց փոխանցման (Արձանագրության** 13-**րդ կետ) ժամկետների պահպանումն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից**: **Ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցման վերաբերյալ հաշվարկային (վճարային) փաստաթուղթը (հանձնարարականը) անդամ պետություններ ուղարկելու յուրաժամանակությունը (Արձանագրության** 13-**րդ կետ)**:

Ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխումը եւ փոխանցումը, ինչպես նաեւ ներմուծման մաքսատուրքերի գումարների փոխանցման վերաբերյալ հաշվարկային (վճարային) փաստաթղթերի ուղարկումը անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից 2017 թվականին իրականացվել են Արձանագրությամբ սահմանված ժամկետների պահպանմամբ:

7.9. **Անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից արտարժութային հաշիվներին մուտքագրված ներմուծման մաքսատուրքերի գումարներն անդամ պետության բյուջե որպես եկամուտ փոխանցելու յուրաժամանակությունը (Արձանագրության** III **բաժին)**:

Անդամ պետությունների ազգային/կենտրոնական բանկերի եւ լիազորված մարմինների կողմից կնքված՝ ընթացիկ հաշիվների պայմանագրերի, առաջնային բանկային ու գանձապետական փաստաթղթերի ընտրանքային ստուգման արդյունքներով արտարժութային հաշիվների վրա անդամ պետությունների լիազորված մարմիններից ստացված ներմուծման մաքսատուրքերի գումարների՝ անդամ պետությունների բյուջեներ ոչ ժամանակին փոխանցելու դեպք 2017 թվականին չի արձանագրվել:

7.10. **Անդամ պետությունների լիազորված մարմինների միջեւ տեղեկությունների՝ համաձայնեցված եւ հաստատված ձեւերով փոխանակման ժամանակ Արձանագրության** IV **բաժնով սահմանված կարգի եւ ժամկետների պահպանում (Արձանագրության** 42-**րդ կետ)**: **Այլ անդամ պետությունների լիազորված մարմիններից ստացված ներմուծման մաքսատուրքերի մուտքերի**,

բաշխված ներմուծման մաքսատուրքերի եւ ներմուծման մաքսատուրքերի բաշխումից ստացված եկամուտների գումարների դինամիկայի վերլուծություն:

Ստուգման արդյունքներով անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից Արձանագրության IV բաժնի խախտումներ 2017 թվականին չեն արձանագրվել:

2017 թվականին անդամ պետությունների բյուջեներ ներմուծման մաքսատուրքերի մուտքագրումը եւ բաշխումը ներկայացված են աղյուսակում:

մլն. ԱՄՆ դոլար

Հայաստանի Հանրապետություն		Բելառուսի Հանրապետություն		Ղազախստանի Հանրապետություն		Ղրղզստանի Հանրապետություն		Ռուսաստանի Դաշնություն	
միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է	92,7	միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է	630,2	միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է	632,1	միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է	179,9	միասնական հաշվին ընդամենը մուտքագրվել է	10 094,0
բաշխված է սեփական բյուջեում	1,1	բաշխված է սեփական բյուջեում	28,7	բաշխված է սեփական բյուջեում	44,9	բաշխված է սեփական բյուջեում	3,4	բաշխված է սեփական բյուջեում	8 606,6
ԵԱՏՄ անդամ պետությունների ն, այդ թվում՝	89,5	ԵԱՏՄ անդամ պետությունների ն, այդ թվում՝	601,4	ԵԱՏՄ անդամ պետությունների ն, այդ թվում՝	587,2	ԵԱՏՄ անդամ պետությունների ն, այդ թվում՝	176,5	ԵԱՏՄ անդամ պետություններ ին, այդ թվում՝	1 487,3
Բելառուսի Հանրապետությ ուն	4,1	Հայաստանի Հանրապետությ ուն	7,7	Հայաստանի Հանրապետությ ուն	7,0	Հայաստանի Հանրապետությո ւն	2,2	Հայաստանի Հանրապետությ ուն	123,1
Ղազախստանի Հանրապետությ ուն	6,4	Ղազախստանի Հանրապետությ ուն	44,5	Բելառուսի Հանրապետությ ուն	28,8	Բելառուսի Հանրապետությո ւն	8,2	Բելառուսի Հանրապետությ ուն	460,3
